

Գագիկ Արայի Հարությունյան

Ծնվել է 1991 թվականի մարտի 15-ին, քաղաք Երևանում:

2007 թվականին ավարտել է Երևանի Րաֆֆու անվան թիվ 36 միջնակարգ դպրոցը:

2011 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2015 թվականին ավարտել է Երևանի դատական փորձագիտության և հոգեբանության ինստիտուտը՝ ստանալով իրավագետ-դատական փորձագետի մագիստրոսի աստիճան:

19.11.2013-25.09.2014թթ. աշխատել է նախ՝ ԿԱ ՊԵԿ Նոր-Նորքի հարկային տեսչության իրավաբանական և հարկադիր գանձումների վարչության, ապա՝ Ֆինանսների նախարարությամ հարկային ծառայության իրավաբանական և հարկադիր գանձումների բաժնի առաջին կարգի, ապա՝ առաջատար մասնագետի պաշտոններում:

30.12.2014-09.03.2016թթ. աշխատել է Քննչական կոմիտեի դեպարտամենտի իրավական ապահովման և վիճակագրության վարչությունում՝ որպես առաջատար մասնագետ:

24.11.2016-13.05.2020թթ. աշխատել է Քննչական կոմիտեի նախ՝ Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնում՝ որպես քննիչ, այնուհետև Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում՝ որպես ավագ քննիչ:

18.05.2020-22.09.2021թթ. աշխատել է Հատուկ քննչական ծառայության կոռուպցիոն, կազմակերպված և պաշտոնեական հանցագործությունների քննության վարչությունում՝ որպես հատկապես կարևոր գործերի քննիչ:

22.09.2021-20.05.2022թթ. աշխատել է Արդարադատության նախարարությունում՝ որպես նախարարի խորհրդական:

27.06.2022-01.02.2023թթ. աշխատել է Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտում՝ որպես վերահսկողության վարչության պետի պաշտոնակատար:

15.09.2022թ.-13.10.2022թ. կատարել է Դատական դեպարտամենտի ղեկավարի պարտականությունները:

01.02.2023 թվականից առ այսօր աշխատում է Բարձրագույն դատական խորհրդում՝ որպես նախագահի խորհրդական:



Սերժ Արտյոմի Ռուշանյան

Ծնվել է 1997 թվականի մարտի 09-ին, քաղաք Երևանում:

2014 թվականին ավարտել է Երևանի 108 համալիր դպրոցը:

2014-2018թթ. սովորել է Հայաստանում Ֆրանսիական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում՝ ստանալով բակալավրի աստիճան:

2015-2018թթ. սովորել է Ժան-Մուլեն Լիոն 3 համալսարանի իրավագիտության ֆակուլտետում՝ ստանալով բակալավրի աստիճան (License):

2018-2019թթ.սովորել է Սորբոնի համալսարանի մագիստրատուրայում՝ Քրեական իրավունք և քրեագիտություն, Մարդու իրավունքներ մասնագիտացմամբ:

2019-2020թթ. սովորել է Քեմբրիջի համալսարանի մագիստրատուրայում՝ Հանրային իրավունք, Մարդու իրավունքներ, Միջազգային հանրային իրավունք, Իրավունքի փիլիսոփայություն մասնագիտացմամբ:

2021թ.-ից առ այսօր սովորում է Հայ-ռուսական համալսարանի ասպիրատուրայում՝ հայցորդ (PHD):

15.02.2017-01.07.2020թթ. աշխատել է «Արդարադատություն և իրավունքի գերակայություն» հասարակական կազմակերպության նախագահ;

2020թ. հուլիս ամսից մինչև 2021թ. հունվար ամիսն աշխատել է Արդարադատության նախարարությունում որպես քրեական օրենսդրության, քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի քաղաքականության մշակման վարչության առանձին գործառույթներ համակարգող խորհրդական (Քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի լրամշակման, Հակակոռուպցիոն դատարանի և կոմիտեի ստեղծման աշխատանքների իրականացում):

2021թ. օգոստոս ամսից մինչև 2022թ. մարտ ամիսն աշխատել է Արդարադատության նախարարությունում որպես նախարարի օգնական («Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի բարեփոխումների համակարգում):

2022թ. մարտ ամսից մինչև 2022թ. սեպտեմբեր ամիսն աշխատել է Արդարադատության նախարարությունում որպես նախարարի խորհրդական (ՀԿԱ Ծառայության և E-Justice թվայնացման բարեփոխումների համակարգում):

Դասավանդել է Ոստիկանության կրթահամալրում քրեական իրավունք, սահմանադրական իրավունք:

2020թ. փետրվար ամսից մինչև 2020թ. հոկտեմբեր ամիսը դասավանդել է Ոստիկանության կրթահամալրում արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունք:



Գևորգ Նվերի Մանուկյան

Ծնվել է 1986 թվականի հունվարի 4-ին, Մասիսի շրջանի, Հովտաշատ գյուղում:

2002 թվականին ավարտել է Հովտաշատ գյուղի միջնակարգ դպրոցը:

2008 թվականին ավարտել է Ոստիկանության ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետը՝ դիպլոմավորված:

12.08.2008-10.04.2013թթ. աշխատել է Ոստիկանության քննչական գլխավոր վարչությունում՝ որպես Արմավիրի մարզի քննչական բաժնի քննիչ:

10.04.2013-25.09.2014թթ. աշխատել է Ոստիկանության քննչական գլխավոր վարչության Արմավիրի մարզի քննչական բաժնում՝ որպես ավագ քննիչ:

25.09.2014-09.09.2018թթ. աշխատել է Քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչությունում՝ որպես հատկապես կարևոր գործերով քննիչ:

09.09.2018-04.12.2020թթ. աշխատել է Քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչությունում՝ որպես հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ:

07.12.2020 թվականից առ այսօր աշխատում է Արմավիրի մարզի դատախազությունում՝ որպես դատախազ:

09.09.2020 թվականից հանդիսանում է Փաստաբանների պալատի անդամ:



Արսեն Գրիգորի Գեղամյան

Ծնվել է 1989 թվականի հոկտեմբերի 15-ին, Արարատի մարզի, Ջրահովիտ գյուղում:
1996-1999 թվականներին սովորել է Արարատի մարզի Ջրահովիտ գյուղի Վլադիկ

Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոցը:

2006 թվականին ավարտել է Արարատի մարզի Մասիս քաղաքի թիվ 5 միջնակարգ դպրոցը:

2010 թվականին ավարտել է Ոստիկանության ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2013 թվականին ավարտել է Գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրատուրան:

12.08.2010-24.05.2014թթ. աշխատել է Ոստիկանության փորձաքրեագիտական վարչությունում՝ որպես փորձագետ, այնուհետև ավագ փորձագետ:

24.05.2014-07.10.2014թթ. աշխատել է Ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոնականի քննչական բաժնում՝ որպես ավագ քննիչ:

07.10.2014-11.10.2021թթ. աշխատել է Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում՝ որպես ավագ քննիչ, այնուհետև ՀԿԳ քննիչ, Հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր

վարչության ՀԿԳ քննիչ, ՀԿԳ ավագ քննիչ, Ընդհանուր բնույթի և ընտրական հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալ (ՀԿԳ ավագ քննիչ):

13.10.2021-22.10.2021թթ. աշխատել է հատուկ քննչական ծառայությունում՝ որպես ՀԿԳ քննիչի պաշտոնակատար:

22.10.2021-10.10.2022թթ. աշխատել է Հակակոռուպցիոն կոմիտեի քննչական երրորդ վարչությունում՝ որպես ՀԿԳ քննիչի պաշտոնակատար:

10.10.2022-24.01.2023թթ. աշխատել է Հակակոռուպցիոն կոմիտեի քննչական երրորդ վարչությունում՝ որպես հատկապես կարևոր գործերով քննիչ:

24.01.2023 թվականից առ այսօր աշխատում է Հակակոռուպցիոն կոմիտեի քննչական երրորդ վարչությունում՝ որպես հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ:

Ունի արդարադատության երկրորդ դասի խորհրդականի դասային աստիճան:



Գարիկ Արթուրի Աբելյան

Ծնվել է 1993 թվականի փետրվարի 23-ին, Սյունիքի մարզի Գորիս քաղաքում:

2010 թվականին ավարտել է Գորիսի թիվ 2 դպրոցը:

2011-2013 թվականներին ծառայել է Զինված ուժերում:

2016 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2018 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան՝ գերազանց առաջադիմությամբ:

2023 թվականից հանդիսանում է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ:

04.08.2016-13.09.2018թթ. աշխատել է Վերաքննիչ քրեական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

15.10.2018-15.12.2018թթ. աշխատել է ԱՆ «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամում՝ որպես կարճաժամկետ փորձագետ:

18.11.2019-15.09.2020թթ. աշխատել է Սյունիքի մարզի դատախազությունում՝ որպես դատախազ:

15.09.2020-11.02.2021թթ. աշխատել է Սյունիքի մարզի դատախազությունում՝ որպես ավագ դատախազ

11.02.2021-18.03.2021թթ. աշխատել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազությունում՝ որպես դատախազ:

18.03.2021-07.02.2022թթ. աշխատել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազությունում՝ որպես ավագ դատախազ:

07.02.2022-31.03.2022թթ. աշխատել է Արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի կազմակերպամեթոդական բաժնում՝ որպես փորձագետ:

01.04.2022 թվականից առ այսօր աշխատում է Արդարադատության նախարարության Քրեական օրենսդրության, քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի քաղաքականության մշակման վարչությունում՝ որպես պետ:



Արմեն Լեռնիկի Շիրոյան

Ծնվել է 1980 թվականի մարտի 8-ին Լոռու մարզ, Ալավերդի քաղաքում: ընտանիքում:

1997 թվականին ավարտել է Ալավերդի քաղաքի Սայաթ-Նովայի անվան թիվ 8-րդ միջնակարգ դպրոցը (գերազանցության ոսկե մեդալով):

1997-2001 թվականներին սովորել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետում:

2001-2003 թվականներին ծառայել է Զինված ուժերում:

2003-2010 թվականներին աշխատել է Ոստիկանության քննչական գլխավոր վարչության Լոռու մարզային քննչական բաժնում՝ որպես քննիչ, այնուհետև ավագ քննիչ:

23.07.2010-25.11.2013թթ.աշխատել է Լոռու մարզի դատախազությունում՝ որպես դատախազ:

25.11.2013-02.10.2015թթ. աշխատել է Շիրակի մարզի դատախազությունում՝ որպես դատախազի տեղակալ:

02.10.2015-18.04.2017թթ. աշխատել է Լոռու մարզի դատախազությունում՝ որպես ավագ դատախազ:

18.04.2017-20.10.2021թթ. աշխատել է Լոռու մարզի դատախազի տեղակալ:

20.10.2021-18.01.2023թթ. աշխատել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր:



Վարսենիկ Ղուկասի Մելքոնյան

Ծնվել է 1989 թվականի հունիսի 14-ին, Մարտունու շրջան, Վերին Գետաշեն գյուղում:

2005-2009թթ. սովորել է Գյումրիի §Պրոգրես¦ համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատում:

09.04.2008-15.01.2015թթ. աշխատել է Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի գործավար:

21.01.2015-30.03.2016թթ. աշխատել է Քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության Արթիկի քննչական բաժնում՝ որպես քննիչ:

30.03.2016-21.12.2016թթ. աշխատել է Քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությունում՝ որպես քննիչ:

21.12.2016-21.07.2017թթ. աշխատել է Քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությունում՝ որպես ավագ քննիչ:

21.07.2017-03.10.2019թթ. աշխատել է Քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությունում՝ որպես հատկապես կարևոր գործերով քննիչ:

03.10.2019-28.10.2021թթ. աշխատել է Քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությունում՝ որպես հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ:

28.10.2021-24.01.2023թթ. աշխատել է Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդահանուր իրավասության դատարանի դատավոր:

Արդարադատության երրորդ դասի խորհրդական է:

Քննչական կոմիտեի նախագահի կողմից արժանացել է դրամական պարգևների:

02.10.2018 թվականին Ոստիկանության պետի կողմից մասնագիտական բարձր պատրաստականություն ցուցաբերելու, ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում ձեռք բերած հաջողությունների համար արժանացել է պատվոգրի:



Արփինե Մանվելի Շտոյան

Ծնվել է 1985 թվականի հոկտեմբերի 4-ին, Շիրակի մարզ, Գյումրի քաղաքում:

2002 թվականին ավարտել է Գյումրու Անանիա Շիրակացու անվան թիվ 16 միջնակարգ դպրոցը:

2006 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2012 թվականին ավարտել է ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

01.03.2008-12.05.2009թթ. աշխատել է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի գործավար:

12.05.2009-28.08.2014թթ. աշխատել է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

28.08.2014-24.11.2014թթ. աշխատել է Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմում՝ որպես արխիվապահի ժամանակավոր պաշտոնակատար:

24.11.2014թ.-ից առ այսօր աշխատում է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:



Գոռ Արամի Գասպարյան

Ծնվել է 1995 թվականի հունվարի 4-ին, Սյունիքի մարզի, Գորիս քաղաքում:

2001-2012թթ. սովորել է Սյունիքի մարզի Խնձորեսկ գյուղի Գարեգին Սևունցի անվան միջնակարգ դպրոցում:

12.06.2013-15.06.2015թթ. ծառայել է Զինված ուժերում:

2012-2013թթ. սովորել է Գորիսի պետական համալսարանում:

2015-2019թթ. սովորել և ավարտել է Երևանի «Գլաձոր» համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2019-2022թթ. սովորել և ավարտել է Գորիսի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի մագիստրատուրան:

07.07.2016-18.01.2019թթ. աշխատել է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի գործավարի ժամանակավոր պաշտոնակատար:

09.01.2020-01.06.2020թթ. աշխատել է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես նույն դատարան *գործուղված*՝ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի օգնական:

01.06.2020 թվականից առ այսօր աշխատում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում՝ որպես դատավորի օգնական: